Առիթ ունեցանք տեսնելու ս. Էջմիածնի մատենադարանի գրչագիրների լիակատար ցուցակը, մի խիստ ընդարձակ գործ, որ պատրաստել է բարեշնորհ Մեսրովպ վարդ. Տէր-Մովսիսեանը։ Մենք հնար ունինք մի քանի հետաքրքիր մանրամասնութիւններ հաղորդել այդ մասին։

Ս. Էջմիածնի մատենադարանի ամբողջ գրչագիրների թիւն է 3350 (այսքան կազմի մէջ են ամփոփուած)։ Դոցա ցուցակի պատրաստութիւնն սկսուած է 1893 թուին, բաղկացած է մօտ 380 տպագրական թերթից և բաժանուած կլինի երկու հատորի։ Կազմուած է վերջերս ընդունուած ձևով [1]), առաջ հայերէն մասն ընդարձակ և ապա կցուած գերմաներէն և ռուսերէն համառօտ ցանկը։

Ցուցակի տպագրութիւնը, մեր հաշուով, կարժենայ մօտ 13,000 ռուբլի, հրատարակութիւնն իւր վերայ է առնելու ս. Էջմիածնի տպարանը և կբացուի գորա համար բաժանորդագրութիւն, 30 ռուբլի վճարով երկու հատորին։ Տպագրութեան կյանձնուի առաջիկայ յունուար ամսից։

Անշուշտ մեր հարուստները կօգնեն այդ ստուար գործի հրատարակութեան։

---

[1]) Այդ ձևով մինչև այժմ զանազան մատենադարանների հայ գրչագիրների ցուցակներ կազմել են Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնը, պ. պ. Ն. Քարամեան և Ս. Կանայեան և Հ. Տրդատ վարդապետ Պալեանց։